23295

ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

331.2
Ժ-21

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

331.2
Ժ-21

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ
ՅԵՐԵՎԱՆ 1940

25.04.2013

331.2
Ժ-21
15 JAN 2010
ОБЯЗАТЕЛЬНЫЙ
ЭКЗЕМПЛЯР

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ԹՌՉՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՖԵՐՄԱՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՈՒ ՎԱՐՁԱՏՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1. Թռչնաբուծական ֆերմաներում, վորտեղ թռչունների գլխաքանակը ապահովում է 2—3 մարդու բեռնվածություն, կոլտնտվարչությունը կազմակերպում է կոլտնտեսության անդամներից թռչնաբուծական մշտական բրիգադա 3 տարուց վոչ պակաս ժամանակով և ամրացնում է նրան թռչունների ամբողջ գլխաքանակը, անհրաժեշտ ինվենտար, քաշող ուժ, թռչնաբուծական շենքերը, ջրավազանները և արոտավայրը։

2. Թռչնաբուծական այդպիսի ֆերմայի աշխատանքները ղեկավարելու համար, կոլտնտվարչությունը թռչնաբուծական բրիգադի անդամներից առանձնացնում է բրիգադիր, վորը և հանդիսանում է տվյալ ֆերմայի վարիչը։ Բրիգադիր— ֆերմայի վարիչը չի ազատվում թռչունների խնամքի անմիջական աշխատանքներից և ֆերմայի աշխատանքների ղեկավարման հետ միասին, ամրացվում է նրան թռչունների վորոշ գլխաքանակ։

999
41

23295

3. Ֆերմաներում, վորտեղ թռչունների գլխաքանակը չի ապահովում 2—3 մարդու բեռնվածությունը, այս դեպքում առանձին ֆերմայի վարիչ չի առանձնացվում և բոլոր աշխատանքները կատարվում է անասնապահական այլ ֆերմայի վարիչի ղեկավարության տակ և թռչնաբուծական ֆերմայի աշխատողները մտնում են ընդհանուր կամ կալտնտեսության վորևե անասնապահական բրիգադայի կազմի մեջ։

4. Վոչ մեծ քանակով թռչնագլուխ ունեցող ֆերմայի կերերի, ջրի, գոմաղբի փախադրումը ու այլ աշխատանքները կատարվում է ընդհանուր անասնապահական բրիգադայի մեկ աշխատողի կամ հենց ֆերմայի թռչնաբուծի միջոցով։

5. Կոլտնտեսության վարչությունը սահմանում է թռչնաբուծական ֆերմայի աշխատողների համար տարեկան արտադրական առաջադրանքներ՝ ի՞նչքան ձու պետք է ստացվի, ի՞նչքան մատղաշ աճեցվի, ի՞նչքան թռչուն պետք է մսի համար բուման տակ դրվի և արտադրական առաջադրանքները կատարելու համար յուրաքանչյուր աշխատողին ինչքա՞ն աշխոր պետք է հաշվարկվի։

6. Թռչնաբուծական ֆերմայում աշխատող կոլտնտեսականների աշխատանքը կազմակերպվում է անհատական գործարքի հիմունքներով, հաշվարկելով աշխորեր նկատի ունենալով ստացված մթերքների վորակն ու քանակը և սպասարկվող թռչունների գլխաքանակը։

ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՇԽՈՐԵՐՈՎ.

7. Գյուղատնտեսական արտելի կանոնադրության համապատասխան, կոլտնտեսության վարչությունը մշակում է և կոլտնտեսականների ընդհանուր ժողովը հաստատում թռչնաբուծական ֆերմայում յուրաքանչյուր աշխատողի համար աշխատանքի գործարքային գնահատումը աշխորերով և բարեխղճորեն աշխատող կոլտնտեսականին մատչելի աշխատանքի բեռնվածության նորմաները, հաշվի առնելով թռչունների գլխաքանակը, թռչնաբուծական ֆերմայի շենքերի կահավորումը, թռչունի վորակը և այլ արտադրական պայմանները։

8. Ֆերմայում աշխատող յուրաքանչյուր թռչնապահին ահրացվում է վորոշ քանակի թռչուն և աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ինվենտարը։

Խոշոր ֆերմաներում, վորտեղ մատչաշների առկա քանակը ապահովում է առանձին աշխատողի բեռնվածությունը, հասակավոր և մատղաշ թռչունների սպասարկումը հանձնարարվում է առանձին անձանց։

Յուրաքանչյուր աշխատողին ամրացվող թռչունների քանակը վորոշելու համար, առաջադրվում է կոլտնտեսության վարչություններին ղեկավարվելու բեռնվածության հետևյալ որինակելի նորմաներով։

ԹՌՉՆԱՊԱՀՆԵՐԻ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ՆՈՐՄԱՆԵՐ

(Գլուխներով)

Թռչունի տեսակը	Բեռնվածության նորմաները ֆերմաներում վորտեղ հասակավոր և մատղաշ թռչուններին սպասարկում են առանձին աշխատողներ.		Հասակավոր և մատղաշ թռչուններ միասին սպասարկող թռչնապահի բեռնվածության նորմաները.
	Հասակավոր թռչուն սպասարկող թռչնապահին	մատղաշ թռչուններ սպասարկող թռչնապահին.	
Հավ	500—600	800—1000	300—500
Բադ	400—500	800—1000	200—300
Սագ	150—200	400—500	100—150
Հնդկահավ	150—200	400—500	100—150

9. Այն թռչնաբուծական ֆերման, վորն ունի տարբեր տեսակի թռչուններ, ֆերմայի այս կամ այն աշխատողի վոչ լրիվ բեռնվածության դեպքում, թույլատրվում է մեկ աշխատողին սպասարկելու մի քանի տեսակ թռչուններ, պայմանով՝ յեթե թռչունը առողջ է և թռչնաբուծական շենքերի, արոտավայրերի ու ջրի ավազանների դասավորումը հնարավորություն են տալիս մի քանի տեսակ թռչունների սպասարկումը մեկ աշխատողով։

Այն ֆերմաներում, վորտեղ կա մի տեսակ թռչուն և նրա առկա քանակը հնարավորություն չի տալիս լրիվ բեռնվածություն տալու աշխատողին, կոլտնտեսության վարչությունը պարտավոր է այդ աշխատողին միաժամանակ հնձնարարելու այլ աշխատանք, վորպիսին վնաս չհասցնի թռչունների խնամքի աշխատանքներին։

Այդ լրացուցիչ աշխատանքի կատարման համար, տրվում է աշխոռեր, համաձայն կոլտնտեսության վարչության սահմանված գործարքային գնահատումների։

10. Թռչնաբուծական խոշոր ֆերմաներում բրուդերային (արհեստական թխսկանի) շրջանում, բրուդերների և ճտերի խնամքի համար, կոլտնտեսության վարչությունն առանձնացնում է գիշերային հերթապահ-ճտապահ. այն դեպքում յերբ ճտահանումը կատարվում է բնական թխսկանի միջոցով, կոլտնտեսության վարչության հայեցողությամբ թռչնապահին ոգնելու համար առանձնացնում է ոգնական, վորը ոգնում է հիմնական թռչնապահին կատարելու թռչունների կերակրման և արոտ տանելու աշխատանքները։

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳՈՐԾԱՐՔԱՅԻՆ ՈՐԻՆԱԿԵԼԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՇԽՈՌԵՐՈՎ

11. Առաջադրել կոլտնտեսություններին կատարելու թռչնաբուծական ֆերմայի աշխատողների աշխոռերի հաշվարկում հետևյալ գործարքային որինակելի գնահատումով՝

12. Այն ֆերմաներում, վորտեղ ճտահանումը կատարվում է բնական թխկանների միջոցով, թխկաններին սպասարկելու համար աշխատողին հաշվում է աշխորեր՝ -

ա) Յուրաքանչյուր 100 գլուխ մատղաշի (ճտերի, բադիկների, սագիկների և հնդկահավերի, վորոնք ստացվել են բնական թխսի միջոցով և 80% առողջ են) 0,4—0,6 աշխոր.

բ) 80%-ից բարձր մատղաշ ստանալու դեպքում 0,8—1,2 աշխոր.

13. Այն ֆերմաներում, վորտեղ կատարվում է ձվատվության անհատական հաշվառում, 11-րդ կետում նշված գործարքային գնահատումները կարող են բարձրացվեն 15—20%-ով։

14. Այն ֆերմաներում, վորտեղ թռչնապահը սպասարկում է մի քանի տեսակի թռչուններ, աշխորերի հաշվումը կատարվում է հասակավոր և մատղաշ թռչուններին սպասարկող աշխատողի համար սահմանված գործարքային գնահատումներով։

15. Ֆերմայի վարիչին (վորտեղ առկա թռչունների քանակը ապահովում է 2—3 մարդու բեռնվածություն) հաշվում են սահմանված նորմաներով աշխորեր, նրան ամրացված թռչունների սպասարկման համար և բացի այդ ֆերմայի բրիգադի աշխատանքները ղեկավարելու ու զոոտեխնիկական-արտադրական հաշվառումը տանելու համար, նրան հաշվում են լրացուցիչ աշխորեր իր վաստակած աշխորերի քանակի 20—25%-ի չափով։

16. Կոլտնտեսություններում, վորտեղ թռչնաբուծության աշխատանքները դրվում է անասնապահական մի այլ ֆերմայի վարիչի վրա, նրան թռչնաբուծական ֆերմայի ղեկավարման համար հաշվում են լրացուցիչ աշխորեր թռչնաբուծության մեջ աշխատողների վաստակած աշխորերի քանակի մինչև 10%-ի չափով։

17. Առաջադրել կոլտնտեսություններին կատարելու թռչնաբուծական ֆերմաներում աշխատողներին դրամական պարգևատրում ի հաշիվ թռչնաբուծական ինկուբատորային կայանից ստացված ընդհանուր գումարի լրացուցիչ վճարումի 40—50%-ի չափով, վորպիսին կոլտնտեսությունը ստանում է ի դիմաց իր հանձնած բարձր վորակ ինկուբացիոն ձվի համաձայն կոլտնտեսության և թռչնաբուծական ինկուբատորային կայանի մեջ կնքած պայմանագրի։

ՀԱՅ ԽՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՅԿ-ՍՍՌ Ա.
Մ. Գորկու անվան

Թարգմանեց՝ Գ. ՅԵՂԻԳԱՐՅԱՆ
Պատ. խմբագիր Հ. ԹՈՒՄԱՆՅԱՆ
Տեխ. խմբագիր՝ Հ. ԱՅՎԱԶՅԱՆ

Տիրաժ՝ 1·500 Պատվեր 612

ՎՖ 704 Հայկական ԽՍՀ ԺԿԽ-ին կից գրքերի և ամսագրերի տպարան, Յերևան.

	ԱՇԽՈՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ.	Հավերի ֆերմայում			Բադերի ֆերմայում			Սագերի ֆերմայում			Հնդկահավերի ֆերմայում		
		Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար մսամիսաց դրանք	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար մսամիսաց դրանք	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար մսամիսաց դրանք	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար մսամիսաց դրանք	Գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար դյուրամարսելի նախամատակներ
1	Թռչնապահին տրացրած թռչունների գլխաքանակից ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար.	0,8–1,0	0,4–0,6	—	1·0–1,2	0,8–1,0	—	6–8	4–6	—	2,5–3,0	1,5-2,0	—
2	Արտադրական առաջադրանքներից ավելին ստացած յուրաքանչյուր 100 ձվի համար լրացուցիչ հաշվում են. . . .	1,2–1,5	0,6–1,0	—	1,5–1,8	1,2–1,5	—	9–12	6–9	—	4,0–4,5	2,5–3,0	—
3	Յուրաքանչյուր տարվա վերջին առկա յեղած թռչունների խնամքի և կերակրման համար ամեն ամիս՝ ա) յուրաքանչյուր 100 գլ. հասակավոր թռչունին աշնան-ձմեռային շրջանում (հոկտեմբեր-մարտ)	5–6	3–4	—	6–7	4–5	—	10–12	8–10	—	10–12	8–10	—
4	Գարնան ամառային շրջանում (ապրիլ-սեպտեմբեր.)	1,5–2,5	1,0–1,5	—	2,5–3,0	1,5–2,0	—	3–4	2–3	—	3–4	2–3	—
5	բ) Յուրաքանչյուր 100 գլ. մատղաշ աճեցնելու համար մինչև արտադրական հոտի փոխադրելը կամ մսի համար ռեալիզացիայի յենթարկելը.	5–6	—	1,5–2,0	6–7	—	1,5–2,0	10–12	—	2,0–2,5	10–12	—	2,0–2,5
6	Մսի համար ռեալիզացիայի յենթարկված յուրաքանչյուր 10 կիլո կենդանի քաշ. թռչունի համար.	2,5–3,0	1,5–2,0	1,0–1,2	2,5–3,0	1,5–2,0	1,0–1,2	5–6	5–6	1,0–1,2	5–6	5-6	1,0– 1,2
7	Տոհմային նպատակների համար թողնված և արտադրական հոտը փոխադրված յուրաքանչյուր 10 գլուխ մատղաշի համար.	3,5–4,0	—	1,2–1,5	3,5–4,0	—	1,2–1,5	5–6	—	1,2–1.5	5–6	5–6	1,2–1,5

ՀՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Գրադարան
ՀՍՍՀ-ՍՍՀ Ա.
Ակադեմիայի անվան

«Ազգային գրադարան»
NL0192951

39497

ВРЕМЕННАЯ ИНСТРУКЦИЯ

По организации и оплате труда в птицеводческих колхозных фермах

Издание Наркомзема Арм. ССР
Ереван—1940